

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 19

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահագիգյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ն. Գևորգյանը, աշխատակազմի բաժինների պետեր:

Համայնքի ղեկավարը, հաշվի առնելով հարցի հրատապությունը, առաջարկեց օրակարգը հաստատել 9-րդ հարցի հավելվածի լրամշակված տարբերակով, ինչն առավել մանրամասն ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Աշտարակ համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Աշտարակ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

8. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքները Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ավան բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

11. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2022թ. N 146-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

14. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցի համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

15. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը: Վերջինս թվային արտահայտությամբ ներկայացրեց բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հարկային արտոնություն տրալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելված 1-ի:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հաստատել <<Աշտարակ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը>>՝ համաձայն հավելվածի:

Ս. Սահակյանը նշեց, որ կարգով սահմանվում են են համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների (այսուհետ՝ ԽՄ-ների) ձևավորման, դրանց գործունեության և այդ մարմիններին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները: Սույն կարգի նպատակն է՝ ձևավորել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, հաստատել <<Աշտարակ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը>>՝ համաձայն հավելվածի:

Զեկուցողը նշեց, որ կարգով կարգավորվում են տեղական ինքնակառավարմանն առնչվող՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների (այսուհետ՝ իրավական ակտերի), ինչպես նաև համայնքի կառավարմանն ու զարգացմանն առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և հարցերի (այսուհետ՝ համայնքային հարցեր) հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների (այսուհետ՝ հանրային քննարկումների) կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման և համայնքի ավագանուն դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները: Հանրային քննարկումների նպատակը իրավական ակտերի նախագծերի և համայնքային հարցերի մասին շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկման, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքագրման աշխատանքների իրականացումն է:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Աշտարակ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի, 37-րդ հոդվածի պահանջներով, հաստատել «Աշտարակ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:

Զեկուցողը նշեց, որ կարգով կարգավորվում են համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունները: Սույն կարգի նպատակն է՝ ապահովել համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի լիարժեք և ժամանակին մասնակցությունն ու ներգործությունը համայնքային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում՝ երաշխավորելով հանրային տեղեկատվության լիակատար թափանցիկությունն ու մատչելիությունը:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ հողամասերի գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի տարածքում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների /սառնարանային պահպանության տնտեսության կառուցման համար/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքները Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1274-Ն որոշմամբ հաստատված «Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները» վերտառությամբ N 1 և N 2 հավելվածի պահանջները, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված ներքոհիշյալ հողամասերը առաջարկված փոխհատուցման գումարներով օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ավան բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 14.10.2022թ. N 228 և N 229 դրական եզրակացությունները, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Աշտարակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության փոփոխությունը:

2. Հաստատել Աշտարակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի /արոտավայր/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության փոփոխությունը:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 11 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2022թ. N 146-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 20.09.2022թ. N 146-Ա որոշման 1-ին կետում կատարել լրացում և շարադրել նոր խմբագրությամբ՝ <<1. Հաստատել Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 02-087-0299-0001 ծածկագրով 1,5հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների հողեր նպատակային նշանակության հողամասի /պատմական և մշակութային/ նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության փոփոխությունը՝ հողամասի նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունքը գրանցելու համար:>>

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ, 1 - ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Հունանյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 12 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48, 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ:

1. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Հունանյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 13 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ

հողվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Օհանավան, Արագածոտն, Ուշի բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարել կից ընդլայնվող հողամասերի սեփականատերերին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Հունանյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - *Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում փողոցի համարակալման մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումայանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և <<կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի կենտրոնից սկիզբ առնող փողոցին տալ 34 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 34-րդ փողոց:

Նոր Երզնկա բնակավայրի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել <<կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 15 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը սահմանելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 9-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի նոյեմբերի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
- ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն